ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԲՈՂՈՔԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/16, 23.04.2019թ.

Բողոք բերող անձ՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ

Պատվիրատու՝ Վանաձորի համայնքապետարան

Գնման ընթացակարգի ծածկագիրը՝ ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43 ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկան՝ փողոցների նշագծման աշխատանքներ

Բողոքի պահանջը՝

Դադարեցնել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. թիվ 3-րդ արձանագրությամբ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ժ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել https://www.e-gov.am/gnumner/ հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

• 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման

ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

Բողոք բերող "ԱՍԿԵՏ-16" ՍՊԸ (ՀՎՀՀ 00898664)
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Նոր Նորք, Լվովյան փ. 3/1, բն.17,
Հեռ: 094001101
Էլ.փոստ՝ safaryan.50@mail.ru

Պատվիրատու՝ Վանաձորի համայնքապետարան
Հասցե՝ ՀՀ, ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 22

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան
Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ «Վանաձոր համայնքի փողոցների նշագծման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցում՝

Բողոք

Գործի հակիրճ նկարագրությունը և բողոքի փաստական հանգամանքները.

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն (այսուհետ նաև Բողոքաբեր) հայտ է ներկայացրել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար՝ «Վանաձոր համայնքի փողոցների նշագծման աշխատանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Այնուհետև, ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշել է՝ առաջին տեղ զբաղեցնող մասնակցին առաջարկել ներկայացնելու «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով ընթացակարգի հրավերով որակավորման չափանիշին վերաբերող որակավորման պահանջի առկայության վերաբերյալ:

16.04.2019թ. Բողոքաբերը էլեկտրոնային հասցեից՝ գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել պահանջված որակավորման չափանիշին վերաբերող փաստաթղթերը:

15-12394-13

Գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. տեղի ունեցած նիստի 3-րդ արձանագրության համաձայն՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Բողոքի իրավական հիմնավորումները.

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «զ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կցանկանայինք Ձեր ուշադրությունը հրավիրել այն հանգամանքի վրա, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն որակավորման չափանիշի փաստաթղթերը ուղարկել է ոչ միայն 16.04.2019թ. էլեկտրոնային տարբերակով, այլ նաև երբ հեռախոսազանգի միջոցով կապ է հաստատվել գնահատող հանձնաժողովի քարտուղարի հետ և Բողոքաբերը տեղեկացել է, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժվում է որակավորման չափանիշների փաստաթղթերը չներկայացնելու հիմքով, քանի որ այդ փաստաթղթերը էլեկտրոնային փոստի միջոցով չեն հասել պատվիրատուին և մտածելով, որ միգուցե առկա է խնդիր էլեկտրոնային փոստի միջոցով փաստաթղթերը ուղարկված լինելու հետ, «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացուցիչը հայտնել է, որ պատրաստ է էլեկտրոնային փոստի միջոցով ուղարկված փաստաթղթերը ներկայացնել նաև առձեռն և անմիջապես Երևան քաղաքից «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի ներկայացուցիչը ուղևորվել է դեպի Վանաձորի համայնքապետարան և տարել որակավորման չափանիշի փաստաթղթերը նաև թղթային տարբերակով (այս փաստը մեր կարծիքով կփաստի նաև Վանաձորի

համայնքապետարանը):

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն կատարել է ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետով իր վրա դրված պարտավորությունը, ըստ որի՝ որակավորման փաստաթղթերը ներկայացնելու վերաբերյալ ծանուցումը ստանալուց հետո՝ 3 աշխատանքային օրվա ընթացքում Ընթացակարգի քարտուղարի էլեկտրոնային հասցեին է ուղարկել որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերը:

Հետևաբար առկա չէ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի պահանջների խախտում, քանզի նշված ենթակետի համաձայն՝ գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը, եթե վերջինս սահմանված ժամկետում ընդհանրապես չի ներկայացրել պահանջված փաստաթղթերը, իսկ տվյալ դեպքում առկա է «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը սահմանված ժամկետում պատվիրատուի էլ. փոստի հասցեին ուղարկելու ապացույցները:

Միևնույն ժամանակ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ն պահանջվող որակավորման փաստաթղթերը 18.04.2019թ. ներկայացվել է նաև թղթային եղանակով:

Խնդրում եմ հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի և օրինակ 2-րդ տեղ զբաղեցրած մասնակցի միջև առկա է 4.000.000 ՀՀ դրամի տարբերություն, ինչը մեր կարծիքով բավականին մեծ խնայողություն կհանդիսանա մարզային համայնքի բյուջեի վրա:

Ելնելով վերոգրյալից՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

ԽՆԴՐՈՒՄ ԵՄ՝

Դադարեցնել Վանաձորի համայնքապետարանի կարիքների համար կազմակերպված «ՀՀ ԼՄՎՔ ԳՀ ԱՇՁԲ 19/43» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.04.2019թ. 3-րդ արձանագրությամբ՝ «ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը:

Կից թերթ:

«ԱՍԿԵՏ-16» ՍՊԸ-ի տնօրեն՝ Է.Մովսիսյան .....

23 ապրիլ 2019թ.